

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



## ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ



ԵՐԵՎԱՆ – 2017



*Միրելի՛ ուսանող,*

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը իր գոյության 70 տարիների ընթացքում պատրաստել է ավելի քան 17 հազար ֆիզկուլտուրայի ուսուցիչներ, տարբեր մարզաձևերից մարզիչներ, ադապտիվ և բուժական ֆիզկուլտուրայի մասնագետներ, մարզական լրագրողներ, ովքեր հաջողությամբ աշխատում են ոչ միայն

Հայաստանում, այլև աշխարհի ավելի քան 30 երկրներում: Այսօր ինստիտուտում սովորում է շուրջ 3000 ուսանող, դասախոսների 50% ից ավելին ունեն գիտական աստիճաններ և կոչումներ: Բուհի բազմաթիվ շրջանավարտներ դարձել են ճանաչված մասնագետներ, ֆիզկուլտուրային-մարզական շարժման փորձառու կազմակերպիչներ, վաստակավոր ուսուցիչներ և մարզիչներ, գեներալներ, պատգամավորներ:

Ինստիտուտը, լինելով ֆիզկուլտուրային կրթության միակ մասնագիտական բարձրագույն ուսումնական հաստատություն եղել, կա և կլինի մարզական կյանքի գիտական կենտրոն, մեր անկախ հայրենիքի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասնագետների պատրաստման դարբնոցը:

Այն ունի բազում ձեռքբերումներ և հաջողություններ, որոնց շարքում հպարտությամբ պետք է նշել նրա ուսանողների և շրջանավարտների փայլուն հաղթանակները միջազգային հարթակներում, այդ թվում նաև՝ օլիմպիական խաղերում:

Ինստիտուտը ժամանակակից պայմաններում անում է ամեն ինչ՝ ապահովելու շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության բարձր մակարդակը:

Վստահ ենք, որ բուհի դասախոսների, գիտնականների, մարզիչների, կազմակերպիչների կուտակած մասնագիտական փորձը կծառայի մեր երկրի շահերին:

Ցանկանում ենք հետագա զարգացում, նորանոր մարզական հաջողություններ, մասնագիտական, մարզական և գիտական ներուժի կատարելագործում: Թող գալիք տարիները դառնան նոր մտքերի, գիտական նախագծերի և ծրագրերի իրականացման տարիներ:

**ՌԵԿՏՈՐ՝ ՎԱՀՐԱՄ ԲԱԶՄԱՍԵՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ**

## ՆԱԽԱԲԱՆ

2005 թվականի դեկտեմբերի 22-ին ՀՀ կառավարությունը հաստատել է «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» որոշումը, որից հետո սկսվել են կոնկրետ քայլեր ձեռնարկվել մեր երկրի բարձրագույն կրթության՝ կրեդիտային համակարգով կազմակերպման ուղղությամբ: Համաձայն այդ որոշման՝ հանրապետության 6 բուհերում կիրառվել է կրթափորձ, որից հետո սկսվել է որոշակի գործընթաց:

Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը ներդրվել է 1989թ. «Էրազմուս» ծրագրի շրջանակներում՝ որպես արտասահմանում ուսանողի ձեռք բերած կրեդիտների ճանաչման գործիք այն բուհի կողմից, որտեղից ուսանողը մեկնել է ուսումնառության: Հետագայում այն սկսեց ծառայել ոչ միայն որպես կրեդիտների փոխանցման, այլ նաև որպես կրեդիտների կուտակման գործիք կրթական ծրագրի շրջանակներում: 2009թ. մշակված Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի ուղեցույցը վերանայվել է նոր իրավիճակակին համապատասխան և հաստատվել է բարձրագույն կրթության նախարարների երևանյան գագաթաժողովում 2015թ.: Նոր ուղեցույցը հաշվի է առնում Բոլոնիայի գործընթացի այնպիսի ձեռքբերումները, ինչպիսիք են Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի ձևավորումը, ողջ կյանքի համար կրթության անհրաժեշտության գաղափարի ամրապնդումը, բարձրագույն կրթության պարադիգմայի փոփոխությունը դեպի ուսանողակենտրոն ուսուցում, կրթական վերջնարդյունքների ավելի լայն կիրառումը և դասավարդման ու ուսումնառության նոր մեթոդների ներդրումը:

ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգը ներդրվել է 2007/2008 ուստարվանից, կրթական կրեդիտների՝ որպես ուսումնական ծրագրերի պարտադիր տարր ներմուծմամբ և ուսանողների ակադեմիական տեղեկագրերում դրանց պարտադիր նշումով: Կրեդիտային համակարգի ամբողջական (փոխանցման և կուտակման) կիրարկումը պարտադիր է՝ սկսած 2010/2011 ուստարվանից: Կրեդիտների փոխանցման և կուտակման ազգային համակարգը հիմնված է համաեվրոպական ECTS (European Credit Transfer and Accumulation System)

կրեդիտային համակարգի վրա, որի հիմնական սկզբունքները գործում են նաև ազգային կրեդիտային համակարգում՝ գործառույթների և ընթացակարգերի իրականացման միասնական հենք և ուղեցույցներ տրամադրելով այն կիրարկող բուհերին: Ազգային մակարդակում կրեդիտային համակարգի իրականացման միասնականությունն ապահովվելու նպատակով ՀՀ ԿԳՆ-ը պարբերաբար նորացնում է համակարգը՝ ներառելով նոր սահմանումներ, նորմատիվներ, ուղեցույցներ և գործիքակազմ: Այդ համատեքստում յուրաքանչյուր բուհ ինքնուրույն է իր կրթական ծրագրերում կրեդիտային համակարգի կիրարկման հարցերում: Հայաստանի Հանրապետությունում գործող կրեդիտային հակակարգի օրինակելի կարգի հիման վրա բուհերի կողմից ստեղծված կրեդիտային համակարգով ուսուցման կազմակերպման կարգը հաստատվում է տվյալ բուհի գիտական խորհրդի կողմից:



# 1. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգի հետևյալ հասկացությունները և դրույթները ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում և չեն կարող ձևափոխվել բուհերի կողմից:

**1. Կարողունակությունը /կոմպետենցիան/** գիտելիքի, ընկալման, ունակությունների և հմտությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանրական (անկախ բնագավառից):

**2. Կրթական վերջնարդյունքը** այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողը առանձին դասընթացի, կրթական մոդուլի կամ մասնագիտության կրթական ծրագրի ավարտին: Կրթական վերջնարդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատել ծրագրով սահմանված կրթական վերջնարդյունքի ձեռքբերման մասին: Կրթական վերջնարդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:

**3. Կրթական (ուսումնական) մոդուլը** ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն մասն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական վերջնարդյունքների պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով:

**4. ECTS կրեդիտը** դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման պայմանական միավոր է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական վերջնարդյունքների դրական գնահատումից հետո:

**5. ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են.**

✚ ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,

✚ կրեդիտը չափում է միայն ուսանողի ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, մակարդակը

կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),

- ✚ կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված կրթական վերջնարդյունքների գնահատման անցումային շեմը հաղթահարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- ✚ ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- ✚ կրեդիտը չի փոխարինում թվանշաններով ուսանողի գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,
- ✚ կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, որը չափվում է գնահատականներով: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխադարձ ներգործության որևէ կապ չկա:

**6. Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը** Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (ԵԲԿՏ) գործող ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորման աստիճանը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի ձեռքբերումից հետո: Այն նախատեսված է ուսանողների ձեռք բերած կրթական վերջնարդյունքների արժևորման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ տեղափոխումը դյուրացնելու համար:



## 2. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀՀ ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

### 2.1. Տարեկան աշխատածավալը և ուսումնական բեռնվածությունը

1. ՀՀ բարձրագույն կրթության համակարգում բոլոր կրթական աստիճաններում առկա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:
2. ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:
3. Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից առնվազն 32-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակներով՝ աշնանային և գարնանային:
4. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:
5. Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 23-30 ժամ, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ 15-22 ժամ:
6. Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:
7. Բացառիկ դեպքերում, ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողը համապատասխան թույլտվության դեպքում կարող է ստանձնել լրացուցիչ ուսումնական բեռնվածություն:

### 2.2. Կրեդիտների հատկացումը

1. Կրթական ծրագրի առանձին դասընթացներին (մոդուլներին) կրեդիտների հատկացումը հիմնվում է մոդուլով սահմանված կրթական վերջնարդյունքին հասնելու համար միջին ուսանողից պահանջվող աշխատաժամանակի (լրիվ ուսումնական բեռնվածության) իրատեսական հաշվարկի վրա:
2. Հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև չկա միարժեք կապ: Կրեդիտների թիվը կախված է նաև պարապմունքների ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներից և այլն:
3. Դասընթացը մշակող ուսումնական ստորաբաժանումը այնպես է պլանավորում ուսանողի ուսումնական աշխատանքը, որ դրա կատարման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանի դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքին:
4. Կրթական մոդուլին հատկացվող կրեդիտները պետք է ունենան ամբողջական արժեքներ՝ ուսումնական ծրագրի մանրատվածության վտանգից խուսափելու և դասընթացների ընտրությունը (այդ թվում նաև այլ կրթական ծրագրերից) դյուրացնելու նպատակով:

5. Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի (նախագիծ, ատենախոսություն և այլն) կատարումով և պաշտպանությամբ կամ ծրագրի ավարտից հետո կազմակերպվող ավարտական (պետական) քննությամբ, որը չի կրկնում կիսամյակային քննություններով հաստատված կրթական վերջնարդյունքների գնահատումները:

### **2.3. Կրթական ծրագրերի աշխատածավալները**

1. Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 180 կամ 240 կրեդիտ է, իսկ բժշկական մասնագիտությունների համար՝ 300 կրեդիտ:
2. Մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 60 կամ 120 կրեդիտ է, իսկ բժշկական մասնագիտությունների համար՝ 180 կրեդիտ:
3. Բոլոր երեք աստիճանների կրթական ծրագրերում ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:

### **2.4. Դասընթացները և կրթական մոդուլները**

1. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:
2. Մեծածավալ դասընթացներն անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:
3. Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝
  - ✚ պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,
  - ✚ կամընտրական դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

### **2.5. Գնահատման համակարգը**

1. Ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը պետք է ունենա գնահատման և նշագրման հստակ և հրապարակված չափանիշներ:
2. Օգտագործվող գնահատման սանդղակը պետք է հնարավորություն տա առանց դժվարության հաշվարկելու կիսամյակի և ուսումնառության ողջ շրջանի ընթացքում ուսանողի վաստակած վարկանիշային միավորները՝ միևնույն ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողների առաջադիմությունները համեմատելու համար:
3. Օգտագործվող գնահատման սանդղակը պետք է հնարավորություն տա հաշվարկելու ուսանողի միջին որակական գնահատականը կիսամյակի և ուսումնառության ցանկացած ժամանակահատվածի համար՝ ուսանողի բացարձակ առաջադիմության չափման համար:
4. Գնահատումները կարող են կատարվել թվային և տառային նշագրումով:



5. Գնահատման եղանակից և գնահատականների նշագրման ձևից (ստուգաթիվ կամ տարբերակված գնահատում) անկախ բոլոր տեսակի գնահատումներն իրականացվում են ուսումնական պարապմունքների ավարտից հետո՝ առանձին քննաշրջաններում կազմակերպվող քննությունների օգնությամբ:

### 3. ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

1. Ըստ ուսման առաջադիմության ուսանողները դասակարգվում են առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա ուսանողների:
2. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե՝
  - ա) կիսամյակում ունի 30 կրեդիտ միջին ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով);
  - բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների 11 կրեդիտները;
  - գ) ապահովել է տվյալ կրթական աստիճանի (ծրագրի) համար սահմանված կիսամյակային ՄՈԳ-ի նվազագույն շեմը:
3. Ուսանողը համարվում է փորձաշրջանի կարգավիճակում, եթե չի բավարարել նախորդ կետում նշված երեք պայմաններից որևէ մեկը:
4. Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղել թերացումներն ու բացթողումները և բարձրացնել ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան: Փորձաշրջանի տևողությունը սահմանում է բուհը:
5. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը դառնում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում չի դուրս գալիս այդ կարգավիճակից:
6. Միևնույն կրթական ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են նրանց վարկանիշային միավորների օգնությամբ:

## 4. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀՖԿՍՊԻ-ՈՒՄ

### 4.1. Համակարգի հիմնադրույթները

1. ՀՖԿՍՊԻ - ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ, որի կիրառման հիմնական նպատակներն են՝
  - ✚ ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր և բարելավել դասահաճախումները,

՝ ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունարար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:

2. Գիտելիքների գնահատումը (ստուգումը) իրականացվում է հետևյալ բաղադրիչներով, որը ներկայացված է աղյուսակ 1-ում

Աղյուսակ 1.

<b>ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ</b>	<b>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐ</b>
<b>Հաճախում</b>	<b>10</b>
<b>Գիտելիքների յուրացում, կարողությունների և հմտությունների ձևավորում</b>	<b>70</b>
<b>Ինքնուրույն անհատական աշխատանք</b>	<b>20</b>
<b>Ընդամենը</b>	<b>100</b>

*(Տես ուսանողի գիտելիքի գնահատման կարգը)*

3. Գնահատման սանդղակը և նշագրումը

ՀՖԿՍՊԻ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 2.

<b>ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ</b>	<b>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՌԱՅԻՆ ՆԻՇԸ</b>	<b>ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՎ</b>
<b>ԳԵՐԱԶԱՆՑ</b>	<b>A+</b>	<b>95 – 100</b>
	<b>A</b>	<b>90 – 94</b>
<b>ԼԱՎ</b>	<b>B+</b>	<b>85 – 89</b>
	<b>B</b>	<b>80 – 84</b>
<b>ԲԱՎԱՐԱՐ</b>	<b>C+</b>	<b>70 – 79</b>
	<b>C</b>	<b>60 – 69</b>
<b>ԱՆԲԱՎԱՐԱՐ</b>	<b>F</b>	<b>0 – 59</b>
<b>ՍՏՈՒԳՎԱԾ</b>	<b>S</b>	<b>60– 100</b>
<b>ՉՍՏՈՒԳՎԱԾ</b>	<b>U</b>	<b>0 – 59</b>

- ✚ Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի ավարտին քննական ամփոփագրում գնահատման արդյունարար միավորի հետ մեկտեղ նշվում է նաև համապատասխան գնահատման տառային նիշը (օրինակ՝ 60, C):
- ✚ Դասընթացներից, որոնք ավարտվում են ստուգարքով գնահատվում է 60 – 100 միավոր և նշվում համապատասխան տառային նիշը (օրինակ՝ 60, S ):
- ✚ Անբավարար գնահատման միավորի դեպքում նշվում է համապատասխան միավորը և տառային նիշը (օրինակ՝ 0-59, U կամ F ):

#### **4.2. Բողոքարկում**

ՀՖԿՍՊԻ-ում առկա և հեռակա ուսուցման ձևերով իրականացվող կրթական ծրագրերում յուրաքանչյուր դասընթաց ամփոփվում է պարտադիր ստուգմամբ: Ուսանողի կողմից ցանկացած գնահատական ենթակա է բողոքարկման, եթե ուսանողը բավարարված չէ գնահատման արդյունքներով և ունի անհրաժեշտ հիմքեր բողոքարկման համար:

##### **Բողոքարկման ընթացակարգը հետևյալն է՝**

- ✚ միջանկյալ կամ հանրագումարային ամփոփչ ստուգման ժամանակ գնահատական ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում ուսանողը կարող է գրավոր դիմել ֆակուլտետային բողոքարկման հանձնաժողով (ՖԲՀ): Հանձնաժողովը կազմվում է թողարկող և տեսական ամբիոնների վարիչներից և ղեկավարվում է ֆակուլտետի ղեկանի կողմից:
  - ✚ ՖԲՀ-ն, ուսումնասիրելով բողոքը, նշանակում է տվյալ ուսանողի կամ ուսանողների խմբի համար քննությունը վերահանձնելու օրը և ժամը:
  - ✚ Բողոքարկման արդյունքում ուսանողի գնահատականը կարող է ինչպես բարձրանալ, այնպես էլ իջնել:
- Գնահատականի կրկնակի բողոքարկում չի թույլատրվում:

#### **4.3. Կրեդիտների փոխանցումը**

1. Այլ բուհերից ՀՖԿՍՊԻ կրթական ծրագրեր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների (կիսամյակ, ուստարի) տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

2. Այլ կրթական ծրագրից ՀՖԿՍՊԻ կրթական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե դրանց բովանդակությունները միանման են, կամ առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

3. Այլ բուհում ՀՖԿՍՊԻ-ի ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի

ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ՀՖԿՍՊԻ - ի և ընդունող բուհի միջև:

4. Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացները կազմակերպվում են ՀՖԿՍՊԻ-ի միջազգային կապերի, ուսումնական բաժնի և համապատասխան ամբիոնի կողմից, որոնց գործունեության հիմնական ոլորտները և պարտականությունների շրջանակները կանոնակարգվում են առանձին կարգով:

#### **4.4. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը**

1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար Ինստիտուտի Որակի ապահովման բաժնի կողմից մշակվել է համակարգչային հատուկ ծրագիր: Ուսանողի ընդունման պահից սկսած, դեկանատները վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից անմիջապես հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

2. Ուսանողի վաստակած կրեդիտները ամրագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- ✓ գումարային կրեդիտների քանակը,
- ✓ գնահատված կրեդիտների քանակը,
- ✓ վարկանիշային միավորները,
- ✓ միջին որակական գնահատականը:

4. **Գումարային կրեդիտը** (Կ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

5. **Գնահատված կրեդիտը** (ԳԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է թվային անցումային միավորներով.

$$ԳԿ = \sum \text{Կրեդիտ}_i :$$

6. **Վարկանիշային միավորը** (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար:

$$\text{ՎՄ} = \sum \text{Կրեդիտ}_i \times \text{Գ}_i,$$

որտեղ  $\text{Գ}_{արդի}$ -ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է:

7. **Միջին որակական գնահատականը** (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ)։

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ԳԿ}} :$$

8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը: